ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Իրականացրեք մեկ շաբաթյա դիտարկում բացահայտելու Ձեր ընտանիքի ջրի նպատակային ծախսի պատկերը: Տան ջրաչափի ցուցմունքի միջոցով դուրս բերեք ջրի նպատակային սպառման քանակական պատկերը (Խմելու և սնունդ պատրաստելու, սպասքի լվացում, լվացք, լոգանք հիգենիկ և այլ նպատակներ): Համակարգչային ծրագրի օգնությամբ (Word կամ Exsel) կազմեք տրամագիր: Ջրի նպատակային ծախսերից որո՞նք կարելի է նվազեցնել:

Օգտագործելով Google Earth Pro անվճար համացանցային ռեսուրսը ուսումնասիրեք Սևանա լճի ափեզրի տարբեր տարիների պատկերը (տվյալները հասանելի են սկսած 1984թ.-ից): Փորձեք ստանալ լճի մակարդակի տարբեր տարիների տատանումների տվյալներ (ելակետ ունենալով, 2024թ. Օգոստոսի 1-ի տվյալը՝ 1900.5 մ):